Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-Կ3 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 7. Կոտայք – ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025-30.06.2025թթ. |
| Ներկայացման օր | 07.07.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բժշկական խորհրդատվություն,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 41 շահառուի. իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 16 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  **Իրավաբանական խորհրդատվության** շրջանակներում 10 շահառուի համար կազմակերպվել է հանդիպումներ Կոտայքի մարզի հանրային պաշտպանի հետ, ում կողմից տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Կազմակերպվել է շահառուների ժամանցը՝** մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 3 խմբակ՝ հոգեբանական. առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա. զարգացնող խաղեր. տիկնիկագործություն, որին մասնակցել է 36 շահառու:
  Կազմակերպվել է թվով 10 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 41 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ ընթերցանության օր՝ «Հայկական հեքիաթներ». Մայրության եւ գեղեցկության օր (2 անգամ). Հանդիպում Իսպանիայի դեսպանի հետ. Սուրբ Զատիկ. Համապետական շաբաթօրյակ. Հաղթանակի օր. «Հարսանիք թիկունքում» ներկայացման դիտում, այց Մեղրաձորի մարզամշակութային կենտրոն, այց Շառլ Ազնավուրի անվան քաղաքային այգի:
- **Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում** իրականացվել է արվեստի, խաղային, ինտելեկտուալ 30 թերապեվտիկ պարապմունքներ. որոնց մասնակցել է 20 շահառու:
- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Այլ ծառայություններ**
  **Բուժքույրական ծառայությունների** շրջանակներում 25 շահառուի տրամադրվել է խորհրդատվություն
  **Վարսավիրական ծառայությունից** օգտվել է 6 շահառու:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
Միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝
https://shorturl.at/MLwKg https://shorturl.at/DNpmC https://short-link.me/11SHF
https://short-link.me/163uO https://short-link.me/163uv https://short-link.me/163vv
https://short-link.me/163vj https://short-link.me/163vO
Թերապիաներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝
https://shorturl.at/zUJPc https://shorturl.at/NPmTy https://short-link.me/11SCu
https://short-link.me/11SDr https://short-link.me/163wg https://short-link.me/11SEh
Հյուրերի ընդունելություն (տե՛ս հետևյալ հղմամբ՝
https://short-link.me/163wC https://shorturl.at/mYWvp

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շաբաթների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- լվացքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու. աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄՍԾՏԿ-ի գործող 1 սոցիալական ֆորումի եւ խնամակալության եւ հոգաբարձության 10 նիստի:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 40/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 26 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 2 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 2 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 2 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 39 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 38 |
| 5.1 | Առողջ ապրելակերպ և առողջական ֆիզկուլտուրա | 28 |
| 5.2 | Զարգացնող խաղեր | 14 |
| 5.3 | Տիկնիկագործություն | 11 |
| 5.4 | Հոգեբանական խմբակ | 13 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 41 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 15 |
| 7. | Այլ ծառայություն (վարսավիրական)<br>Բուժքուրական խորհրդատվություն | 8<br>25 |

Կազմակերպության ղեկավար Երվանդ Մխիթարյան «07» 07. 2025թ.

[illegible]